


Հաստատում եմ
Երևանի շախմատի ֆեդերացիայի
փոխնախագահ *Արմեն Ա. Քալանթարյան*



Երևանի 2018թ.-ի առաջնությունների կանոնակարգ

Տղամարդկանց Երևանի 88-րդ առաջնություն

<i>Կազմակերպիչ՝</i>	Երևանի շախմատի ֆեդերացիա
<i>Նպատակները՝</i>	Երևանի ուժեղագույն շախմատիստների և Հայաստանի առաջնության առաջին խմբի մրցաշարի մասնակիցների որոշումը:
<i>1/4 եզրափակիչ</i>	
<i>Ժամկետներ՝</i>	25.01- 03.02.2018թ.
<i>Մասնակիցներ՝</i>	մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն 2001- 2075 վարկանիշ ունեցող շախմատիստները, ինչպես նաև 2001-ից ցածր վարկանիշ ունեցող, 1999թ.-ի դեկտեմբերի 31-ից հետո ծնված I կարգային և I կարգի բալ ունեցող շախմատիստները:
<i>Անցկացման կարգը՝</i>	Շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ:
<i>1/2 եզրափակիչ</i>	
<i>Ժամկետներ՝</i>	11-19 մայիսի 2018թ.
<i>Մասնակիցներ՝</i>	մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն՝

- 2076 -ից մինչև 2300 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,
- Երևանի 2018թ.-ի մինչև 16 տարեկան պատանիների առաջնությունում 1-ից 3-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները,
- Երևանի 2018թ.-ի մինչև 14 տարեկան պատանիների առաջնությունում 1-ից 3-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները,
- Երևանի 2018թ.-ի մինչև 12 տարեկան պատանիների առաջնության հաղթողը,
- կանանց ազգային վարպետները,
- կանանց ՖԻԴԵ-ի վարպետները,
- 25 շախմատիստ 1/4 եզրափակիչ մրցաշարից:

Անցկացման կարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ:

Եզրափակիչ

Ժամկետներ՝ 23.05-01.06.2018թ.

Մասնակիցներ՝ Մրցաշարին մասնակցելու իրավունք ունեն՝

- միջազգային գրոսմայստերները,
- միջազգային վարպետները,
- ազգային վարպետները,
- ՖԻԴԵ-ի վարպետները,
- կանանց միջազգային գրոսմայստերները,
- կանանց միջազգային վարպետները,
- Հայաստանի նախորդ առաջնության 1-ին խմբի մրցաշարի մասնակիցները,
- 2300-ից բարձր ազգային կամ միջազգային վարկանիշ ունեցող շախմատիստները,

- 15 շախմատիստ կիսաեզրափակիչ մրցաշարից,
- 2018թ.-ի Հայաստանի մինչև 18 տարեկան պատանիների առաջնությունում 2-ից 5-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները,
- 2018թ.-ի Հայաստանի մինչև 16 տարեկան պատանիների առաջնությունում 1-ից 5-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները,
- 2018թ.-ի Հայաստանի մինչև 14 տարեկան պատանիների առաջնությունում 1-ից 3-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստները,
- 2018թ.-ի Հայաստանի մինչև 16 տարեկան աղջիկների առաջնության հաղթողը

Անցկացման կարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ:

Կանանց Երևանի 74-րդ առաջնություն

Կազմակերպիչներ՝ Երևանի շախմատի ֆեդերացիա,
Հայաստանի շախմատային ֆեդերացիա

Նպատակները՝ Երևանի ուժեղագույն շախմատիստուհիների և Հայաստանի առաջնության մասնակիցների որոշումը:

1/2 Եզրափակիչ

Ժամկետներ՝ համաձայն Հայաստանի շախմատային ֆեդերացիայի որոշման

Մասնակիցներ՝ մինչև 2001 ազգային վարկանիշ ունեցող, ինչպես նաև I և II կարգային շախմատիստուհիները,

Անցկացման կարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ:

Եզրափակիչ

Մրցաշարը միառժամանակ հանդիսանում է Հայաստանի կանանց առաջնության առաջին խմբի մրցաշար:

Ժամկետներ՝ համաձայն Հայաստանի շախմատային ֆեդերացիայի որոշման

Մասնակիցներ՝

- 2001-ից ավելի ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները,
- Հայաստանի 2018թ.-ի մինչև 18, 16 և 14 տարեկան աղջիկների առաջնության մասնակիցները և մինչև 12 տարեկան աղջիկների առաջնության չեմպիոնը,
- 10 շախմատիստուհի 1/2 եզրափակիչ մրցաշարից:

Անցկացման կարգը՝ շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ: